

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ 2012թ. հունվարի 17-19-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության տնօրեն Լարս Թյուգեսենը և Բելիին-Բրանդենբուրգի վիճակագրական ծառայության վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ռինգո Ռաուփախը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Որակի կառավարում» բաղադրիչի շրջանակում,
- ✓ 2012թ. հունվարի 30ից – փետրվարի 10-ը ՀՀ ԱՎԾ-ում էր ԱՄՆ Հաշվառումների բյուրոյի համար միջազգային ծրագրերի կենտրոնի տեխնիկական աջակցության և կարողությունների զարգացման ենթաբաժնի ժողովրդագիր Գրեգորի Մարտինը՝ 2011թ. Հայաստանի մարդահամարի իրականացման աշխատանքների շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2012թ. փետրվարի 6-10ը ՀՀ ԱՎԾ-ում էր ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետ Ջեյմս Ջիհանը՝ ԵՀ/ՊԳԿ պարենային ապահովության տեղեկատվական համակարգի հիման վրա կայացվող որոշումների բարելավմանը ուղղված ծրագրի շրջանակում հանդիպում անցկացնելու նպատակով: